

7048

Q 6np9 pnpnpnpnpnp

W 6np9 pnpnpnpnpnp

891.99

F-12

1899







339

ԳԻՌԳԻ ԲԱՐՈՒՐԵԱՆՑ.

# ՄԵՂԱԽՈՐԸ

891.99

F-19

(ՀԵՔԵԱԹ)

Հրատ. Չարարիայ Գալստեանցի.

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսես Վարդանեանի  
Тип. М. Вартамянца, Вел. ул. д. № 17

1894



1949

Дозволено Цензурою, г. Тифлисъ, 17 Августа, 1894 г.

## ՄԵՂԱԻՈՐԸ

### I.

Շատ հին ժամանակ, մի քաղաքում ապրում էր մի մարդ: Էս մարդը ինչ մեղք ասես, որ չէր արել. էլ «գողութիւն» ասես, էլ «սպանութիւն» ասես, էլ «կողոպտութիւն» ասես, էլ «աւազակութիւն» ասես, էլ «անառակութիւն» ասես. «Աստուած» ասես՝ նա չէր հաւատում, եկեղեցի չէր գնում, չէր հաղորդւում... մախան, ինչ գլխներդ ցաւեցնեմ, մէկ խօսքով ասեմ ու պըծնեմ՝ աշխարհիս մէջ ի՞նչիւր ասես որ նա չէր արել: Սրանք էլ հերիք չեն, էս մեղքերի վրա մի մեծ մեղք էլ աւելցրեց, որ դառնայ «կատարեալ մեղաւոր». այն է՝ նա փախցրեց մի աղջիկ, որ չըզիտեմ ազգականներ, բարեկամն էր, ծանօթն էր թէ ինչն էր, Էսպէս որ, Էն աղջիկը նրան չէր հասնի, սա դօրով փախցրեց ու տարաւ: Ասենք թէ նրան սիրում էր, նա ոչ որի չէր սիրում. միայն թէ փախցրեց, տարաւ ծախեց թէ ի՞նչ արեց՝ այդ միայն յետոյ յայտնեց:

Էն տէրութեան մէջ, ուր նա ապրում էր, դրա մէջ մեղաւոր մարդ չըկար: Նա մտրումը գրել էր, որ ինչ մեղք անի՝ բոլորը իւր ընկերներին ասի, միայն էս փախցրած աղջկայ մասին ոչ որի ոչինչ չէր ասում:

### II.

Մի օր էս մարդը նստած մտածում էր իր



գործած մեղքերի մասին: Յանկարծ սկսեց դողալ, էս դողը քանի գնաց — սաստկացաւ:

— «Էս դողալը իմ մեղքերիցն է», — մտածեց նա, — «էհ, ինչ պաճնում է — գառնայ, մի էս էլ եկեղեցի կ'երթամ, կը հաղորդւեմ, բաւական է ինչքան որ մեղք գործեցի»: Ասաց և ուղղակի գնաց տէրտէրի մօտ խոստովանելու ու միւս օրն էլ հաղորդւելու:

Գնաց՝ մտաւ եկեղեցի, երեսը խաչակնքեց, խէչերը համբուրեց, մօտեցաւ տէրտէրին ու խնդրեց, որ իրան խոստովանեցնի:

Խոստովանելու ժամանակ մղղսին մի քիչ հեռու նստած, զարմացած մտիկ էր անում խոստովանողին: Խնչ էր տեսնում — տեսնում էր, որ տէրտէրի ու խոստովանողի մէջ տեղը մի թոնիր կայ ու էն թոնրի միջից մի օձ դուրս է գալիս ու մտնում խոստովանողի բերանը, էլի նրա բերանիցը դուրս գալիս, մտնում թոնիրը: Երբ որ տէրտէրը նրան խոստովանեցրեց ու վերջացրեց, խոստովանողը վերկացաւ ու տուն գնաց: Մղղսին ասաց տէրտէրին.

— Տէրտէր, ես ձեզ մի բան պէտքէ ասեմ ու խորհուրդ էլ պէտքէ տամ, խնդրեմ չը նեղանար:

— Մէկի տեղ էրկուսն ասա, որդի, զի պէտքէ նեղանամ:

— Արի ասա էլի, ով է գիտում, ժամանակ է ու մարդու քէֆը: Հն, տէրտէր ջան, էլախտայ մարդը, որը ամենից վերջը խոստովանուեցաւ, նա շատ ու շատ մեղաւոր մարդ է, ես խորհուրդ եմ տալիս, որ նրան չը հաղորդես, մինչև իր բոլոր մեղքերը

չը խոստովանի:

— Ի՞նչպէս, որդի, դու էդ բաները մրտնդից գիտես:

— Ես գիտեմ ու ասում եմ, որ չըղիտենամ չեմ ասի:

— Բայց էլի, որդի, ասա տեսնենք, ի՞նչ բան է:

— Տէրտէր, հիմի միք ասիլ տայ. երբ որ ժամանակը գայ, ես ինքս կ'ասեմ ձեզ:

— Լաւ, ասաց տէրտէրը:

Եկեղեցին կոխեցին ու գնացին իրանց տները:

### III.

Միւս օրը մեղաւորը պիտի հաղորդւէր: Գնաց եկեղեցի: Հաղորդւելու ժամանակ երբ մօտեցաւ տէրտէրին, տէրտէրը հաղորդ չը տուց ու ասաց.

— Եսօր ես քեզ հաղորդ չեմ տալ, որովհետեւ դու բոլոր մեղքերդ չ'ես խոստովանել: Եթէ բոլոր գործած մեղքերդ մէկ-մէկ կը խոստովանես, էն ժամանակը միայն հաղորդի արժանի կը լինիս:

Մեղաւորը մտածեց. «ինչ ոտտանայ է երեւում էս տէրտէրը. սա էլ ուզում է ինձ «էն» բանն ասել տայ, բայց, տէրտէր ջան, հաշիղ մէջը շատ ես սխալւում, ես էն բանը քեզ չեմ ասի, չեմ ասի որ չեմ ասի»:

Մի քանի բոպէից յետոյ, երբ պատարագը վերջացաւ, տէրտէրը մտաւ խորան զգեստը փոխելու, հէնց էդ ժամանակ մղղսին էլ մտաւ խորան ու



անցեալ օրւայ տեսածը պատմեց տէրտէրին: Տէր-  
տէրն էլ ասաց.

— Ես էս օր էլ պէտքէ խոստովանեցնեմ, դու  
էլի մտիկ արա, տես էրեզւայ բանը էլի կրկնուում  
է թէ չէ:

Մղգսին այդպէս էլ արեց: Մինչ տէրտէրը մե-  
ղաւորին խոստովանեցնում էր, նա դէս էր գնում  
սուտի մոմ պոկում, դէն էր գնում խէշը սրբում, դէս  
էր գալիս աւետարանի թոգն էր սրբում, դէն էր  
գնում շարականի թոգն էր սրբում, մախլան, էնպէս  
էր անում, որ մեղաւորը չը նկատէր իրան. Խոստո-  
վանելու ժամանակ միենոյն կրկնեց. կրկին թոնիր,  
կրկին օձ: Երբ տէրտէրը խոստովանեցրեց, պրծաւ  
ու մեղաւորն էլ եկեղեցուց դուրս գնաց, մօտեցաւ  
մզկաւուն ու հարցրեց.

— Որդի, էրեզւայ բանը էլի տեսար:

— Հա, տէրտէր ջան, էլի:

— Բաս քանի որ էդպէս է, ես իսկի նրան չեմ  
էլ հաղորդի:

Երբ դարձեալ հաղորդելու ժամանակն էկաւ,  
մեղաւորը էլի մօտեցաւ տէրտէրին — ինչ է հաղորդի.  
բայց տէրտէրը բոլորովին մերժեց, ասելով, որ դու  
խիստ մեղաւոր մարդ ես, էնպէս որ, ես քեզ չեմ  
հաղորդի: Մեղաւորը առանց մի խօսք ասելու դուրս  
էկաւ եկեղեցուց ու ուղղակի գնաց տուն:

#### IV.

Մեղաւորը միւս օրը վերկացաւ տեղից թէ չէ,

շորերը հագաւ, երեսը լաց ու եկաւ նստեց մի  
աթոռի վրա:

— «Էրկու ճանփայ կայ», — մտածում էր նա. —  
«Որ կողմն է աւելի լաւ ճանփան. լայնը թէ նեղը.  
«արդար» դառնալը, թէ մեղաւոր մնալը: Օրինակ  
վերցնենք իմ կեանքը. ինչ է իմ կեանքը — ոչինչ.  
ոչ կին ունեմ, ոչ էլ որդիք, բացի սրանցից մի խա-  
ղաղ կեանք էլ չունեմ, զիսի մարդ սպանել, կողոպ-  
տել, «աղջիկ փախցնել» ու շատ էսպէս բաներ: Ես  
արդէն 40-ին մօտ մի մարդ եմ, բայց մի բարի  
գործ չեմ կատարել, իմ բոլոր մեղքերը չեմ քաւել.  
ուրեմն աւելի լաւ է, որ ես հեռանամ էս աղմկեալ  
կեանքից ու գնամ մեղքերս քաւելու»:

Երբ ամեն բան վերջացրեց, այսինքն՝ տունը  
ծախեց, տան մէջ եղած-չեղածն էլ ծախծխոտեց,  
գնաց էրկու շղթայ գնեց, մէկը ձեռքերի համար,  
միւսը՝ ոտքերի, մնացած փողն էլ բաժանեց աղքատ-  
ներին: Նա շղթաներով իւր ձեռքերն ու ոտքերը  
կապեց ու ճանփայ ընկաւ-գնաց: Գնաց, գնաց, շատն  
ու քիչը Աստուած գիտէ, հասաւ մի ծովի: Ծովի  
ափին մի ծեր ձկնորս ձուկն էր բռնում: Նա մօտ  
գնաց ձկնորսին ու ասաց.

— Ահա, էս բանալին ծովը գցի, էս բանալիով  
կապել եմ իմ ձեռքերն ու ոտքերը, էլ չեմ ուզում  
որ իմ ձեռքերն ու ոտքերը բացւին:

— Զէ, սիրելիս, այդ իմ գործս չի. ես չեմ կա-  
րող ուրիշի մեղքի տակն ընկնել:

Մեղաւորը տեսաւ, որ ձկնորսը բանալին ծովը



Հի գցում, ինքը հազիւ հազ կարողացաւ երկու ձեր-  
քովը բանալին ծովը գցել: Բանալին գցեց ու  
ուղղակի գնաց դէպի լեռները, մի այրի մէջ ճրգ-  
նելու: Գնաց, գնաց, տեսաւ մի այր, մտաւ մէջը,  
չորեց ու սկսեց ազօթք անել: Նա ոչ «Հայր-մեր» գի-  
տէր և ոչ էլ ուրիշ ազօթքներ, նրա ազօթքը էս էր  
«Աստուած, դու ողորմիր ինձ, մեղքերիս թողութիւն  
տուր»: Եւ այդպէս զգուշ զգուշ լինելով զգնալի օրը

V.

Եգ երկիրը, ուր ապրում էր մեղաւորը, պատ  
կանում էր մի մեծ ու հարուստ թապաւորի։ Թաղա-  
ւորը էգ տարի պատերազմ ունէր հարեան թաղաւորի  
հետ։ Ռեւ պատերազմ չ'եղած՝ թաղաւորը մի գիշեր  
մի երազ տեսաւ։ Հրեշտակը նրան երեաց ու ասաց.

— «Երկրի թագաւոր, քո տէրութեան մէջ մի ճգնաւոր կայ: Նա գտնուում է մի այրի մէջ, ուր նա ճնկւում է: Մինչեւ դու նրան քո պալատը չը բերես, դու պատերազմիւք և ուրիշ գործերիւք մէջ աշոյուլութիւն չ'ես ունենայ: Նա առաջ մեղաւոր էր, Աստուած լսելով նրա ջերմ, սրտից բղխաց ազօթքները, խղճաց վրան ու ներեց. էնպէս որ Աստուած ուզում է, որ նա այսուհետեւ ապրի քո քաղաքում՝ պալատիւք մէջ և հանգիստ կեանք անցկացնի»:

Միւս օր թաղաւորը իր մեծաւորներից մի քանիսին ուղարկեց լեռները մանգալու ու հրեշտակի ասած ճգնաւորին գտնելու: Իսկոյն նրա մեծաւոր-

—Հրէն էն կողմն է,—պատասխանեց ձկնորդը, ցոյց տալով մեղաւորի գնացած կողմը և դարձեալ ուռիանը ծովը գցեց:

Թագաւորի մեծաւորները ձկնորսին խնդրեցին, որ իրանց համար մի քանի հատ ձկներ խաշի: Ձկնորսն էլ հնազանդեց ու նրանց համար մի քանի հատ մեծ ձկներ խաշեց: Երբ ձկները կտրտեցին և վերջին ձուկն էլ էն է կտրտում էին, ահսան, որ փորումը մի բանալի կայ: Հարցրին ձկնորսին, թէ՛ «էս ի՞նչ է նշանակում». ձկնորսը պատասխանեց.

— Էս մի մեղաւոր մարդու չղթաների բանալին է, որը հիմի ճգնելիս կը լինի, որովհետեւ չափ մեղաւոր մարդ էր:

Թաղաւորի մեծաւորները մտածեցին. «Հատ կարելի է էն ճղնաւորի մասին է խօսքը, որին մենք պէտքէ պանենք». բայց ձկնորսին չը հաւատացին: Նրան փող ընծայեցին և իրանց կիսատ թողած ճանփանէ շարունակեցին:

Սրանք գնացին ծովից մի որոշ տեղ հեռու, մօտեցան մեծ լեռներին, սկսեցին այդ լեռների ստորոտներում մանկալ,

Դէս մանէկան, դէն մանէկան, վերջը մի այլ տեսան. ներս մտան այլը, տեսան մի չղժայակապ



մարդ՝ չորած, աղօթում է:  
ձգնաւորը սրանց տեսնելով խիստ վախեցաւ,  
որովհետեւ իր այգտեղ գնալու օրից սկսած, ոչ մի  
աղաւմուրդի չէր տեսել: Թագաւորի մեծաւորները մօ-  
տեցան նրան ու ասացին.

— Մենք պէտքէ քեզ մեր թագաւորի մօտ տա-  
նենք. վեր կաց, հայր սուրբ:

— «Հայր սուրբ!», սրղիք, հողիններիդ մեղք միք  
աւելցնի, զուր տեղը ինձ «հայր սուրբ» միք ասի. ես  
մեղաւոր մարդ եմ, ամենեւին արժանի չեմ էդ կոչմանը:

— 'Ի զուր տեղը մի վրդովւի, հայր սուրբ, մենք  
քեզ կը տանենք մեր թագաւորի մօտ, զու մեզ մօտ  
խաղաղ ու հանգիստ կեանք կ'անցկացնես. Աստուած  
քո մեղքերին թողութիւն է շնորհել:

Խեղճ նախկին մեղաւորին հաղիւ համոզեցին,  
որ համաձայնի իրանց հետ գնալ:

Նրան հաղիւ հազ բարձրացրին ու ձիու վրա  
դրին: Նրա շորերը կեղտից փխել էին, չորած տեղը  
նրա ոտքերի միւր որդունակալել էր:

Թագաւորի մեծաւորները սրան կամաց-կամաց  
տանում էին դէպի թագաւորի քաղաքը: Նրանք դեռ  
քաղաքին չը հասած, իրանցից մէկին ուղարկեցին  
թագաւորի մօտ՝ յայտնելու, որ նրա ուղած մարդուն  
բերում են:

Թագաւորը շատ ուրախացաւ. խսկոյն իւր գօր-  
քով, ժողովրդով, խաչ ու խաչվառով ճգնաւորի  
առաջն էկաւ, հետն էլ մի վարդապետական հագուստ  
էին բերում, ճգնաւորի համար:

Երբ ճգնաւորը էս ամենը տեսաւ, շատ ու շատ  
դարմացաւ, սկսեց լալ, ասելով, թէ ինքը արժանի  
չի էնպիսի մեծ պատւին, ինչպիսին ցոյց են տալիս  
թագաւորն ու իր ժողովուրդը: Թագաւորն ինքը իր  
ձեռքով վարդապետական հագուստը ճգնաւորին հագ-  
ցրեց ու ուղղակի իր պալատը տարաւ:

## V I.

Երբ հասաւ թագաւորի պատերազմ գնալու,  
ժամանակը, նա վերցրեց իր հետ և ճգնաւորին  
որ նա աղօթէ իր յաղթութեան համար:

Թագաւորը իր թշնամիներին յաղթեց, կարող  
էր նրանց ամբողջ երկրին էլ տիրել, մեծ աւարով  
էլ յետ դառնալ, բայց ճգնաւորը նրան խորհուրդ  
տուց էլ չ'անել: Թագաւորը լսեց նրան ու իր թշնա-  
միներին հետ դաշն կապեց, որ նրանք այլ ևս մէկու-  
մէկու հետ չը կռեն ու ինչպէս հարազատ եղբայր-  
ներ, էնպէս ապրեն:

Նրանք յետ դարձան իրանց քաղաքը: Ժողովուր-  
դը մեծ աղմուկով ու ցոյցերով նրանց առաջն էկաւ,  
փառաբանելով ճգնաւորին ու թագաւորին:

## V II.

Պատերազմից յետոյ, առաջին գիշերը, հրեշտակը  
էլի երևաց թագաւորին ու ասաց.

— «Թագաւոր, էդ ճգնաւորը, որը ապրում է քեզ  
մօտ, մի մեղք էլ ունի. եթէ էն մեղքն էլ խոստո



վանի, դա աշխարհիս վրա ամենատուրը մարդկան-  
ցից մէկը կը լինի: Եւ ինչպէս ինչպէս, արանդը  
Միւս օրը Թաղաւորն էկաւ ճգնաւորի մօտ ու  
սպաց:

— Հայր սուրբ, դու մի մեղք էլ ունիս, եկ, էդ  
էլ ասա ու պրծի:

— Չէ, որդի, չեմ կարող:


— Չէ, հայր սուրբ, չի կարելի, պէտքէ ասես,  
որ ասես:

Ճգնաւորը շատ դէս ու դէն ընկնելուց յետոյ  
պատմում է իր աղջիկ փախցնելու մասին ու վերջն  
էլ աւելացնում:

— Որդի, էս աշխարհում գրանից էլ փիս մեղք  
չը կայ: Ես քեզ խորհուրդ եմ տալիս քո օրէնքների  
մէջ՝ էս օրէնքն էլ մտցնես, որ ոչ մի մարդ չը հա-  
մարձակի աղջիկ փախցնել, ծախսելու մտքով:

Թաղաւորն էլ լսեց, և իր օրէնքների մէջ էս  
օրէնքն էլ մտցրեց ու «սրբազան օրէնք» կոչեց, և  
բարձրագոյն հրաման արձակեց, որ եթէ մէկը էս  
օրէնքին հակառակ գնայ, նա սատիկ կը պատժուի:

Այդպէս ինչպէս ինչպէս, արանդը



*[Faint handwritten text at the top of the right page]*

ՎԵՐՋՆԱՆ.

Տեսնում էք, սիրելի ընթերցողներ, որ այն-  
քան շատ ու անթիւ մեղքեր գործողը, կարող է,  
եթէ միայն ինքը ցանկանայ,—վերջը արդար  
մարդ դառնալ եւ Աստուած էլ միշտ այդպիսիներին  
ներում է: Ուրեմն, եթէ մենք էլ մեր մեղքերից  
դարձ-գանձ: Աստուած էլ մեր մեղքերը կը ների  
եւ այն ժամանակ մենք էլ աշխարհիս վրա՝ խա-  
ղաղ, հանգիստ եւ երջանիկ կեանք կ'ունենանք:

1893 թ. 10-ին Յուլիսի

Թիֆլիզ

*[Faint handwritten text below the date]*

*[Faint handwritten text at the bottom of the right page]*



7042

Agnes - Hannah

Theo & 3/5 1/2

Agnes - Hannah

subscript, curre  
& curre



manus

manus - Agnes

manus

manus

Agnes - Journal

2013







